ՊՈՂՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԵՐ-ՄԱՐԳԱՐՅԱՆԸ ՀԱՂԱՐԾՆԻ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՂ

Հ. Ս. ԽԱՌԱՏՅԱՆ

Հաղարծնի վանքը, որը համարվում է միջնադարյան Հայաստանի հոգևոր և մշակութային նշանավոր կենտրոն, գտնվում է Դիլիջանից 10—12 կմ հեռավորության վրա, մայր խճուղուց ձախ, անտառներով շրջապատված մի բարձրադիր հարթ տեղանքում։ Համալիրը կառուցված է ամուր քարաժայռի վրա և բաղկացած է ս. Գրիգոր, ս. Ստեփանոս, Կաթողիկե, ս. Աստվածածին եկեղեցիներից, սեղանատնից, գավթից ու աղոթատներից։ Այդ համալիրի գլխավոր տաճարն է ս. Աստվածածինը։ Այն կառուցվել է 1071 թ.։ Սեղանատունը կամ տրապիզը կամարակապ չորս փառավոր սյուներով մի ընդարձակ շինություն է, որը 1248 թ. կառուցել է տալիս Մենաստանի վարդապետ Հովհաննես Արմանեցին, որի մասին վկայում է դռան կամարաձև շրջանակի վրայի արձանագրությունը. «Ի թվ. ՈՂԷ յառաջնորդութեան Յովհաննէսի վարդապետի շինութեան Աստուածաշէն տանս և ես Կուտաս արարող սնունդ սրբոցս ետու աւգնութիւն արապաղիս դէկան վարդապետս և մի՛բանքս խոստացան ի տանի սուրբ Բարսղին... աւր ով խափանե իմ մեղացն տէր է»[1]։ Վանքում ամփոփված են Անիի Բագրատունի թագավորներ Սմբատի և Գագիկի մարմինները[2]։

Թեև այս սրբավայրի հիմնադրման տարեթիվը ստույգ հայտնի չէ, սակայն այնտեղ այցելող յուրաքանչյուր ոք բոլոր տաճարներին կարող է տեսնել այդ շինությունների կառուցողների, վերանորոգողների, նորոգողների և նվիրատուների տարբեր ժամանակներում թողած պատմական նշանակության բազմաթիվ վիմական արձանագրություններ։ Ահա դրանցից մի քանիսը.

Ս. Աստվածածին եկեղեցու հարավային ներսի պատին.

«Շնորհիւն Աստուծոյ ես թէկս որդի Աշոտ յազգէ Հարբանց և ամուսին իմ Բորինա և եղբայրս իմ Սմբատ միաբանեցաք ի սուրբ ուխտս որպէս և հայր իմ և տուաք արդիւնս շինութեանն»[3]։

Սուրբ Գրիգորի գավթի դռան ճակատի մեծ քարի վրա.

«Կամաւն Ամենակալին Աստուծոյ այս մեր դիր յիշատակի է և արձան մշտնջենաւոր որդեաց մեծին Սարգսի յազգէ Բագրատունեան Իվանէի և Զաքարէի յորժամ նախախնամութիւն Աստուծոյ ետաս յարարածս և ետ... տիրել սեպհական ժառանգութեան նախնեաց մերոց ետ ի ձեռս մեր յառաջ զանառիկ դղեակն և զԱմբերդ և զթագաւորանիստ քաղաքն Անի և ապա զամուրն Բջնի և զՄարանդ մինչև զաւազանը ի Թաւրեժ զԿարնոյ քաղաք մինչև Խլաթ զՇաւշ և Զարուան զՊարտաւ մինչև ի Բեկուկան և զայլ բազումս իւրեանց սահմանաւ զոր աւելորդ համարեցաք յիշատակել այլ և անբարկանալին Աստուած սիրեց զթագ պարծանաց գլխոյ մեր զԶաքարէայ և կոչեց առ ինքն որոյ ձեռն եղև արիութիւնս և ես շինեցի ի մեր հայրենի վայրս Հաղարծին Ժամատուն վիմարդեան կամարակապ ի դուռն

---

1 Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, Երևան, 1982, էջ 162։ Արձագանգ. 1888, № 8, էջ 104։

2 Ս. Բարխուդարյան, Արցախ, Բաքու, 1895, էջ 367։

3 Դիվան հայ վիմագրության, պր. 6, Երևան, 1977, էջ 50։

սուրբ Գրիգորիս 'և մէկ այգի յԾրևանէ որ վասն յիշատակի եղբաւր իմո և պարտին սպասաւորք սորա զաւագ խորանին պատարագն Զաքարէի մատուցանել անխափան կատարիչք զրոյս աւրհնեալ լիցին յԱստուծոյ»[4]։



Դռան ճակատի վրա.

«Ի թվին ՈՄԵ ի յաշխարհակալ Տէրութեան Զաքարէի և Իվանէի և յառաջնորդութեան Տեր Ստեփանոսի ես Խալթ որդի Սմբատայ յիմ դեղն Քանաքեր Սկանտարանց հողն գնեցի և ի Հաղարծինս ետու վասն իմ հոգւոյս և վասն յերկարութեան կենաց Շահնշահի և Աւագին և մեր աղբարց զծարգարգարին և զերկրորդ Թաշտեկանն՝ ժամն ինձ ետուն զամեն եկեղեցեացս ով զայգին աստից հանէ կամ զիմ ժամն խափանէ իմ մեղացս տէր է և Յուդայի մասնակից եղիցի»[5]։

Այս և մյուս արձանագրությունները վկայում են, որ վաղ միջնադարում Հաղարծնում ծաղկել է հոգևոր-մշակութային կյանքը ու վերելք ապրել XII դ. վերջերին և XIII դ. սկզբին, վանքի միաբան խաչատուր վարդապետ Տարոնացու օրոք, որն իր հոգևոր գործերի հետ հորինել է գանձեր ու շարականներ, նպաստել խազագրության արվեստի հետագա զարգացմանը։

Եվ, վերջապես, խոսելով Հաղարծնի սրբավայրի մասին, ավելորդ չի լինի խոսել նաև նրա անվան ծագման մասին։ Ի՞նչ է նշանակում կամ որտեղի՞ց է առաջացել այդ անունը։ Դրա բացատրությունը, ավելի շուտ, ժողովրդական ստուգաբանությունը տալիս են Հասան Ջալալյանը իր «Ճանապարհորդություն ի մեծն Հայաստան» գրքում և «Արձագանքը»։

Հաղարծնի ս. Աստվածածին եկեղեցու պատի մանրակերտ քանդակի շուրջ կանգնած են ձեռքերը վեր պարզած երկու վեղարավոր կրոնավորներ։ Ըստ ավանդույթի, տաճարի օծման հանդեսի ժամանակ նկատում են, որ նրա գմբեթի վրա սավառնում է արծիվը, որի վայրիվերումները նմանվում էին խաղի։ Վարդապետները արծիվը համարում են սուրբ հոգու մարմնա-

[4] Արձագանք, 1888, № 8, էջ 102—103։

[5] Նույն տեղում, էջ 103։

վորում։ Այդ օրվանից էլ մենաստանը կոչում են Խաղ արծվի կամ Հաղ արծվի։ Այստեղից էլ վանքի ՀԱՂԱՐԾԻՆ անվանումը[6]։

XIII դ. այնտեղ սկսում է մարել կյանքը, իսկ XVIII դ. վերջին, Աղա Մահմադ խանի արշավանքների ժամանակ, որը խոշոր բանակով հարձակվում է Վրաստանի վրա, ստեղծվեց բացառիկ ծանր կացություն։ Մարտերի ընթացքում, չնայած հերոսական դիմադրությանը, ուժերի անհավասարության հետևանքով հայ և վրաց զոհվածները պարտվում են։ Ավերվում է մայրաքաղաք Թիֆլիսը, սրի է քաշվում տեղի ժողովուրդը։ Դա իր հերթին բացասական ազդեցություն է ունենում Ղազախի գավառի հայ բնակավայրերի վրա, որի հետևանքով դատարկվում են գավառի բազմաթիվ բնակավայրեր, ավերվում վանքեր, եկեղեցիներ, որտեղ դադարում է կյանքը, այդ թվում նաև Հաղարծնի վանքում[7]։

Շրջակայքի գյուղերի բնակչության տևական բացակայության հետևանքով սրբավայր և վանք տանող երբեմնի արքունական ճանապարհը մատնվում է մոռացության։

Մոտ 70 տարի վանքը դառնում է անմարդաբնակ։ Ահա այս ժամանակաշրջանում է, որ վանքի համալիրը, իր շինություններով հանդերձ, խիստ տուժում է և քայքայվում։

Հաղարծինը և մյուս վանքերը վերջնական ավերումից փրկելու նպատակով 1849 թ. հուլիսի 27-ին Ղազախի և Շամշադինի՝ այդ ժամանակվա Հայոց հոգևոր գործոց վերատեսուչ Սարգիս Վարշամյանցը մի հայտարարությամբ դիմում է Վրաստանի և Իմերեթի Հայոց վիճակային հոգևոր Ատյանին ու խնդրում միջոցներ ձեռք առնել դրանք փրկելու համար[8]։

Այս հայտարարությունը՝ խիստ մտահոգիչ և տագնապալի, միաժամանակ հրավերք-կոչ-էր՝ պահպանելու և ժողովրդին վերադարձնելու նրա մշակույթի և պատմության մի բեկորը։ Հանրությանն անծանոթ մի հոգեվորական ս. Էջմիածնից՝ Պողոս վարդապետ Տեր-Մարդարյանը, որոշում է իր վրա վերցնել Հաղարծնի բարեկարգման ու վերականգնման գործը։ 1862 թ. նա Էջմիածնից դալիս է ամայի սրբավայրը, դառնում նրա վերակացու։ Երիտասարդ վարդապետին սպասում էր, հիրավի, դժվարին գործունեություն՝ խաշնարած այլազգիներից ազատել հուշարձանը և նրա տարածքը, ձեռնամուխ լինել շինությունների վերանորոգմանն ու սրբավայրի վերականգնմանը[9]։ Նրա ջանքերով կարգի է բերվում ճանապարհը, փայտե կամուրջ է գցվում գետակի վրա, հնարավորություն է ստեղծվում վանք գնալու համար։ Գավթի տանիքին նա փայտից պատրաստում է մի գմբեթ, կախում երկու զանգ, և գավիթը ծառայում է որպես զանգակատուն։ Նաև դուռ է դնում ս. Ստեփանոս եկեղեցուն։ Մեկ տարվա ընթացքում նրան հաջողվում է որոշ չափով բարեկարգել իր խնամքին հանձնված շինություններն ու տարածքը։

Պողոս վարդապետը ծնվել է 1830 թ. Քանաքեռում, 1841—1848 թթ. սովորել և ավարտել է Մայր Աթոռի ժառանգավորաց դպրոցը։ 1848—1858 թթ. եղել է վանական կառավարության անդամ և լուսարար։ 1859—1863 թթ. եղել է Դորու հաջորդը, 1864 թ. մայիսի 15-ին Բարձրագույն հաստատությամբ նշանակվում է Սինոդի անդամ։ 1867 թ. հունիսի 30-ի օրագրությամբ Սինոդը նրան կարգում է Ղազախի գավառի Հայոց վանքերի կալվածքների կառավարիչ և Հաղարծնի վանքի վանահոր պաշտոնակա-

---

6 Ս. Հասան-Ջալալյան, Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, Տփխիս, 1842, էջ 130։ Արձագանք, 1888, № 8, էջ 102։

7 Հայ ժողովրդի պատմություն, Երևան, 1972, էջ 302, Հ. Հ. Ոսկյան, Արցախի վանքերը, Վիեննա, 1953, էջ 235,

8 ՀՀ ԳԳԿ արխիվ, ֆ. 53, գ. 90, ց. 1։

9 Արձագանք, 1887, № 29, էջ 483, Խ. Շահնազարյան, Հաղարծնի վանքը (անտիպ հիշողություններ), Դիլիջանի երկրագիտական թանգարանի գիտական ֆ. 5։

տարի 1892 թ. օգոստոսի 17-ին նշանակվել է Գանձակի փոխանորդ, միևնույն ժամանակ վարելով Հաղարծնի վանահայրության պաշտոնը[10]։

Շրջակա բնակավայրերի հայ բնակչության մեջ վարդապետը մեծ հեղինակություն էր վայելում, որը նպաստեց վանքի և նրա կալվածքների բարեկարգմանը։ Վարդապետին հաջողվում է մշտական բնակություն հաստատելու համար մի քանի ընտանիք հրավիրել, որոնք կարգավորելու էին վանքի տնտեսությունը։

Պողոս վարդապետի ջանքերով ստեղծվում է վանքի մատենադարանը, որտեղ պահվել են մեծ քանակությամբ եկեղեցական ձեռագիր, գրչագիր գրքեր, դասագրքեր, այդ թվում ավետարան, Մայր Մաշտոց, Նոր կտակարան, Աստվածաշունչ, Տոնացույց, Ղազար Փարպեցու «Թուղթը», Ներսես Շնորհալու «Թուղթ ընդհանրականը», Եղիշե, Ս. արք. Ջալալյանի «Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստանը» և այլն։

Պետական արխիվում պահպանվում է դեռևս 1885 թ. վարդապետի կազմած վանքի սեփականության ընդարձակ գույքացուցակը։ Այնտեղ բազմաթիվ հնություններ են թվարկվում, ինչպես՝ արծաթյա և ոսկեզօծ խաչեր, սրբապատկերներ, եպիսկոպոսական գավազաններ։ Վանքապատկան սեփականությունից նշված են՝ մեկ ջրաղաց, ջրաղացքարեր, վեց

---

10 Մուրճ, 1896, № 12, էջ 1649, Արարատ, 1896, № 11, էջ 522։

գում, հողագործական և շինարարական տարբեր գործիքներ, կենցաղային կառույցներ, ինչպես նաև 4000 սաժեն ճանապարհ[11]։

Անտառը, համաձայն անտառվարչության տեսուչ Ալեքսանդր Ռոտինյանցի հաշվարկի, արժեր 230.000 ռուբլի։ Ահա այս խոշոր հնարավորությունն էր, որի հետ մեծ հույսեր էր կապում վանահայրը։ Անտառի վանական շահագործման շնորհիվ ձեռք բերած միջոցներով նա պետք է լրիվ բարեկարգեր վանքը, ստեղծեր վանքապատկան գյուղ, նպաստեր Դիլիջանի ծխական դպրոցին, վանքում մի հոգևոր դպրոց բանար[12]։ Սակայն այդ բոլոր ծրագրերն ու նպատակները մնում են անկատար։ Դիլիջանի անտառապետը ամեն կերպ աշխատում է խանգարել վարդապետին։ Այստեղից էլ սկսվում է վանահոր վեճը իշխանությունների հետ, որը ձգվում է ավելի քան երեսուն տարի։ Երկարատև պայքարի ընթացքում նա դատարանների դռներն է մաշում՝ կալվածքի հարցում վանքի իրավունքները վերականգնելու նպատակով, սակայն արդյունքի չի հասնում։ Նույնիսկ զառամյալ հասակում, երբ գավառական դատական ատյաններում նա այլևս չի կարողանում արդարության հասնել, որոշում է հարցը լուծել պետական բարձրագույն ատյանների միջոցով։ Այս նպատակով նա նույնիսկ գրավ է դնում իր ունեցվածքը։

Վարդապետին քաջածանոթ դիլիջանցի խաչատուր Շահնազարյանը տարիներ անց իր անտիպ հիշողություններում գրում է. «Մարդ մնում է զարմացած, թե ինչպես այս կամքի տեր մարդը չէր հուսահատվում այդ անհաջողություններից և առանց օգնության, նույնիսկ քաջալերության, մի եռանդով, ապագայի քաղցր հույսով, ուրախությամբ տանում էր ամեն տեսակ տանջանք ու զրկանքներ։ Ամենքի կողմից հարգված այդ անձնազոհ մարդը դռնե-դուռն ընկած ժողովրդավարություն էր անում, իր չարքաշ կյանքը քարշ տալով վանքի դատն էր պաշտպանում»[13]։

Խրիմյան Հայրիկը, դեռևս Վարագա վանքում լսում է Պողոս վարդապետի՝ վանքը վերականգնելու ձեռնարկումների մասին և մի քաջալերող, խրախուսական նամակ է գրում ու ոգևորում՝ սատար կանգնելով նրան։

1895 թ. Պողոս վարդապետը ճանապարհվում է Պետերբուրգ՝ վանքապատկան անտառի հարցով։ Նրա մեկնումը տեղի է ունենում այն օրերին, երբ երկիրը և մայրաքաղաքը պատրաստվում էին նոր կայսր Նիկոլայ Երկրորդի թագադրությանը։ Մայրաքաղաքում նրան մեծ օժանդակություն ցույց տվեցին հանրաճանաչ Կարապետ Եզյանը և սենատոր Գոնչարովը։ Ամիսներ անց, վարդապետի համառությունը, ի վերջո, տվեց իր արդյունքը։ Սենատը հօգուտ Հաղարծնի հաստատեց 700 դեսյատին հողատարածությունը՝ իր անտառներով հանդերձ։

1896 թ. հոկտեմբերի վերջերին վեհափառը նրան հրավիրում է Էջմիածին։ Պետերբուրգի անսովոր պայմանները, օտարության մեջ այդ ինն ամսվա չարչարանքներն ու ճանապարհորդությունները բոլորովին քայքայել էին ազգանվեր հոգևորականի առողջությունը։ Բռնկվում է տիֆ։ Հյուսիսային մայրաքաղաքում իր եռանդն ու առողջությունը վատնած վարդապետի օրգանիզմը չի կարողանում հաղթահարել վրա հասած ծանր հիվանդությունը, և նա վախճանվում է միաբանների միջավայրում, 1896 թ. նոյեմբերի 2-ին։ Նրան թաղում են հաջորդ օրը ս. Էջմիածնի միաբանության հանգստարանում։ Մայր տաճարում մատուցված հոգեհանգստին ներկա էր նաև վեհափառը, դրվատեցին նրա արժանիքները, ասելով՝ «Միմիայն նրա անխոնջ աշխատանքին է պարտական այսօր Հաղարծնի վանքը իր կալվածքներով և բարեշինությամբ»[14]։

---

11 ՀՀ ԳԱԿ արխիվ, ֆ. 56, գ. 87, ց. 6։

12 Արձագանք, 13. XI. 1898։

13 Խ. Հ. Շահնազարյան, նշվ. աշխ.։

14 Նոր դար, 16. I. 1897, Արձագանք, 10. XI. 1896, Արարատ, 1896, № 11, էջ 522։

Իր գնահատականն է տվել «Արձագանք» թերթը՝ գրելով. «Պողոս վարդապետը այն արժանավոր հոգևորականներից մեկն էր, որոնք ամենայն ազնվությամբ ծառայում էին եկեղեցուն և ազգին։ Գաղափարի էր հետևում, չուներ ոսկի և արծաթ ինչք բազում, այլ իբրև ճշմարիտ աշակերտ Քրիստոսի և Ավետարանի մտածում էր, որ այդ մասին Աստված կհոգա։ Մենք զրկվեցինք մեր արժանավոր հովվից, Հաղարծինը՝ իր անձնվեր պաշտպանից, իսկ սուրբ Էջմիածինը՝ իր ընտիր անդամից։ Այո, պակասեցավ մի անձնավորություն, իդեալական՝ բառի բուն նշանակության մարդ, որից կարող է մեր հոգևորականությունը օրինակ վերցնել, թե ինչպես պետք է ծառայել գաղափարի համար»[15]։

Վարդապետի գործունեության մասին տարբեր թերթերում և ամսագրերում դրվատանքով են գրել նրա հետ շփվող և առնչվող, նրան հանդիպող և նրա գործունեությունը գնահատող հեղինակավոր ներկայացուցիչներ, գրականության գործիչներ։

1881 թ., դեռևս վանահոր կենդանության օրոք, «Մեղու Հայաստանի» լրագիրը իր թիվ 86-ում գրել է. «Այս երևելի մենաստանը (Հաղարծինը) գրեթե մոռացության էր մատնված, թեև նրա փեղեցիկ շինությունները արժանի են, որ առավել կյանք ունենային, քան թե ունենալու են այսուհետև... Պողոս վարդապետն է, որ ջանք է գործ դնում այս սրբությունները պահելու համար, սիրելով ազգը, որպես աչքը... ոչինչ չի խնայում նախնյաց նշխարները կորուստից ազատելու համար»։

Մակար եպիսկոպոս Բարխուտարյանը 1890-ական թվականներին Արցախի նահանգի տարածքը ուսումնասիրելու ընթացքում այցելում է նաև Հաղարծին, որի արդյունքների մասին մանրամասն շարադրում է իր «Արցախ» գրքում. «Արժանապատիվ հայր սուրբը մաքառելով ամեն տեսակ նեղության, աղքատության և թշվառության հետ, պահպանում է վանքերս և ցարդ հազիվ կարողացած է վանքապատկան անել 5000 օրավար հողերից միայն 1105 օրավար, որը տաքնավին վճռված չէ ևս վերջնականապես»[16]։

Հաղարծնի և վանահոր մասին իր ստացած տպավորությունն ու կարծիքն է հայտնում հայ մեծ գրող Ռափայել Պատկանյանը։ Նա գրել է. «Մի քանի ժամից հասանք հոյակապ անտառով շրջապատված պատմական վանքը, տեսա հռչակավոր Պողոս վարդապետին և նրա կտուրի տակ մի գիշեր անցուցի։ Նա պատմեց, որ բնակություն է հաստատել վանքում 1862-ին, լուսահոգի Մատթեոս կաթողիկոսի օրոք և կամաց-կամաց կենդանություն է տվել վանքին։ Այժմ Հաղարծինը բավականին հարստություն ունի, 1000 օրավար անտառ, մի փոքր անասունների հոտ, փոքրիկ բանջարանոց և պարտեզ։ Հայր Պողոսը պատմեց ինձ, թե ինչ հրաշքով գտել է գետնաթաղ պղնձե կաթսան և զանգակը (այժմ պահվում է Հայաստանի պատմության պետական թանգարանում—Հ. Խ.) յուր խցի դրան առջևից և ինչպես ուղարկել է Էջմիածնի թանգարանը։ Կաթսայի վրայի մակագրությունից երևում է, որ 785 տարի առաջ մի քահանա ընծայել է վանքին»[17]։

Պողոս վարդապետի մտահոգությունը, որպես Ղազախի գավառի վանքերի կալվածքների կառավարչի, չէր սահմանափակվում միայն Հաղարծնի վանքի գործերով։ Նա կարևոր էր համարում նաև իրեն վստահված գյուղերի բնակչության և եկեղեցիների հոգևոր պահանջների բավարարումը։ Հաճախ այցելում էր գյուղեր, ձեռք մեկնում կարիքավորներին, ատարում, ըստ հնարավորին, տառապյալներին[18]։

---

15 Արձագանք, 10. XI. 1896։

16 Մ. Բարխուտարյան, նշվ. աշխ., էջ 368։

17 Արձագանք, 1887, № 29, էջ 483։

18 Նոր դար, 3. V. 1891։

Վանահոր մահից հետո վանքը զրկվում է իր անխոնջ մշակից։ Այդ պատճառով ինչպես վանքի, այնպես էլ նրա կալվածքների ճակատագիրը ընդմիշտ մտահոգում են կաթողիկոս Խրիմյան Հայրիկին։ Հիրավի, հանգուցյալ վանահորը փոխարինողներից և ոչ մեկը չկարողացավ նույն հոգածությամբ տնօրինել վանքի գործերը։ Եվ նկատի ունենալով Հաղարծնում ստեղծված այդ վիճակը, չնայած իր պատկառելի հասակին, կաթողիկոսը 1900-ականի սկզբներին քանիցս այցելում է Հաղարծնի մենաստան՝ տեղում գործերի ընթացքը վերահսկելու, վանքի բարեկարգման շարունակվող աշխատանքները կարգավորելու նպատակով։ 1900 թ. կաթողիկոսի համաձայնությամբ և Սիմոն Զավարյանի գլխավորությամբ մասնագետներից բաղկացած մի հեղինակավոր հանձնախումբ է կազմվում՝ Էջմիածնի վանքապատկան Մարց և Հաղարծին կալվածքների հետագա շահագործման պայմաններն ու հնարավորությունները ուսումնասիրելու համար։ Նույն թվականի հուլիս-օգոստոսին աշխատանքները ավարտելուց հետո, հանձնախումբը ներկայացնում է մի ընդարձակ հաշվետվություն։ Ըստ հանձնախմբի հաշվարկների, այս կալվածքի շահագործումից վանքի տարեկան զուտ եկամուտը պետք է դառնար 6.000 ռ.[19]։

Կարևոր էին վանքի տաճարների, շինությունների, ճանապարհների վերանորոգման աշխատանքները։ Դրանք իրականացնելու համար Ալեքսանդրապոլից հրավիրվում է ճարտարապետ Մ. Զարիֆյանը։ Կնքվում է անհրաժեշտ աշխատանքներ կատարելու պայմանագիր, որի հիման վրա վերանորոգվում են վանքի կիսավեր շինությունները, տաճարների խարխլված պատերը, թիթեղապատվում դրանց տանիքները, բարեկարգվում մենյակները, ճանապարհները և այլն[20]։

1919—1920 թթ. հետո Հաղարծնում մարեց հոգևոր կյանքը։ Հուշարձանի հովանավորությունը ստանձնեց պետությունը, և համալիրը նախահեղափոխական շրջանից պահպանված տեսքով հասել է մինչև մեր օրերը։ 1990 թ. Հայաստանի նախարարների խորհրդի որոշմամբ այն հանձնվեց Էջմիածնի կաթողիկոսարանի տնօրինությանը[21]։

ПОГОС ВАРДАПЕТ ТЕР-МАРГАРЯН—БЛАГОСТРОИТЕЛЬ АГАРЦИНА

Г. С. ХАРАТЯН

Резюме

В числе сохранившихся историко-архитектурных и культовых памятников Армении X—XII веков особо выделяется Агарцинский монастырский комплекс.

Систематические войны и набеги способствовали разрушению монастыря и в конце XVIII—середине XIX вв. монастырь окончательно был заброшен и забыт.

Возрождению монастыря в 60-ых г. XIX в. и посвятил себя член Синода св. Эчмиадзина молодой вардапет (архимандрит) Погос Тер-Маргарян, который на протяжении своей более чем 30-летней деятельности восстановил духовную жизнь монастыря, возродил ее хозяйство.

---

19 ՀՀԿ արխիվ, ֆ. 56, գ. 387, ց. 6։
20 ՀՀԿ արխիվ, ֆ. 57, գ. 328, ց. 1։
21 Խորհրդային Հայաստան, 9. II. 1990։